ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի հունիսի 21-ից 23-ը

Ղազախստանի Հանրապետություն (ք. Աթիրաու) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը Ազգանունը՝**

   Տիգրան Գաբրիելյան, Արամ Սայամյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ ՊԵԿ մաքսային հսկողության վարչության պետի տեղակալ,

   ՀՀ ՊԵԿ մաքսային հսկողության վարչության ապրանքների դասակարգման և սակագնային կարգավորման բաժնի գլխավոր մաքսային տեսուչ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Ղազախստանի Հանրապետություն, ք. Աթիրաու, հունիսի 21-ից 23-ը

4" Հրավիրող կողմը՝

Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտե

5. Գործուղման նպատակը /աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/՝

1) Ղազախստանի Հանրապետության մաքսային ծառայության կենտրոնական ապարատի, տարածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, ԵԱՏՄ անդամ-պետությունների՝ ապրանքների դասակարգման հարցերով մաքսային փորձագետների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դասակարգման հարցերով ներկայացուցիչների մասնակցությամբ սեմինար-խորհրդակցության օրակարգում ընդգրկված մի շարք խնդրահարույց ապրանքների (կրիպտոգրաֆիկական մայնինգ էլեկտրոնաթվային սարքերի, հակափականների, տարատեսակ տրանսպորտային միջոցների և այլ սարքավորումների ու արտադրանքի) դասակարգման քննարկումներին մասնակցություն և մեր դիրքորոշման, մոտեցումների ներկայացում:

2) Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիային (այսուհետ՝ ԵԱՏՄ ՄԾՄԿ) կից՝ ապրանքների դասակարգման հարցերով աշխատանքային խմբի հերթական՝ 44-րդ նիստին մասնակցություն:

6" Քննարկված թեմաները՝

Սեմինար-խորհրդակցության և ԵԱՏՄ ՄԾՄԿ կից՝ աշխատանքային խմբի 44-րդ նիստի օրակարգերում ընդգրկված մի շարք ապրանքների դասակարգման հիմնահարցերի և մոտեցումների քննարկում:

7" Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Օրակարգերում ընդգրկված խնդրահարույց ապրանքների դասակարգման վերաբերյալ քննարկումներին մասնակցություն, մեր դիրքորոշման, մոտեցումների ներկայացում, ամփոփում:

8" Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Օրակարգերում ընդգրկված խնդրահարույց ապրանքների դասակարգման վերաբերյալ միանման մոտեցումների մշակման անհրաժեշտության նպատակով ԵԱՏՄ անդամ-պետությունների մաքսային ծառայությունների կողմից ներկայումս մշակվում են և կմշակվեն առանձին տեսակի ապրանքների դասակարգման վերաբերյալ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կամ ԵԱՏՄ ՄԾՄԿ որոշումների նախագծեր, որոնց ընդունման դեպքում այդպիսի որոշումները կապահովեն դրանց միատեսակ դասակարգումը:

9" Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

ԵԱՏՄ ՄԾՄԿ-ին կից՝ ապրանքների դասակարգման հարցերով աշխատանքային խմբի գործունեությունը ենթադրում է խնդրահարույց հանդիսացող առանձին տեսակի ապրանքների դասակարգման վերաբերյալ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի կամ ԵԱՏՄ ՄԾՄԿ որոշումների նախագծերի մշակում և ընդունում անդամ-պետությունների մաքսային ծառայությունների կողմից ներկայացված ապրանքների մասով:

Նման նախագծերը ամփոփվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշումների տեսքով, որոնք պարտադիր են անդամ-պետությունների համար կամ բոլոր անդամ-պետությունների միաձայն համաձայնության դեպքում՝ ԵԱՏՄ ՄԾՄԿ որոշումների տեսքով, որոնց հիման վրա ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 21-րդ հոդվածին համապատասխան՝ հրապարակվում են առանձին տեսակի ապրանքների վերաբերյալ ԵԱՏՄ անդամ-պետությունների մաքսային մարմնի պաշտոնական պարզաբանումների տեսքով: Այդպիսի որոշումները կոչված են ապահովելու ապրանքների **միատեսակ դասակարգումը**:

10" Ստորագրությունը, ամսաթիվը՝

Տիգրան Գաբրիելյան՝

Արամ Սայամյան ՝

26.06.2023թ.